

**Հայաստանի Հաշվապահների և Աուդիտորների Ասոցիացիայի
աուդիտի որակի մոնիթորինգի ընթացակարգ**

Սույն Ընթացակարգը մշակելիս հիմք է ընդունվել ՀՀԱԱ 2012թ. Հուլիսի 24-ի Խորհրդի նիստում հավանության արժանացած Զարգացման ծրագիրը (Նպատակ 1. աուդիտորական գործունեության որակի հսկողություն), ինչպես նաև 2012թ. հուլիսի 25-ի նախաձեռնող խմբի աուդիտի որակի վերահսկողության սկզբունքների վերաբերյալ Հուշագիրը:

1 Նպատակը

Սույն փաստաթղթի նպատակն է սահմանել ՀՀԱԱ կողմից նախաձեռնված՝ աուդիտի որակի մոնիթորինգի (ԱՌՄ) սկզբունքները և ընթացակարգը:

2 ԱՌՄ մասնակիցները

ՀՀ-ում աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ունեցող և տվյալ տարվա ընթացքում ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացրած աուդիտորական ընկերություններ համակարգին միացած կամավորության սկզբունքով:

3 Հիմնարար սկզբունքներ

1. Կամավոր մասնակցություն:
2. ԱՌՄ իրականացում համաձայն Աուդիտի Միջազգային Ստանդարտների:
3. Հարցաշարերի և գնահատման համակարգի հրապարակայնություն:
4. Ոչ դրական գնահատում ստացած մասնակիցների անվանումների գաղտնիություն:
5. Վճարովիություն

4 ԱՌՄ իրականացման գործընթացը

1. ԱՌՄ-ին կամավորապես միանալը արտահայտվում է ԱՌՄ-ին միանալու Համաձայնագիրը ստորագրելու միջոցով: ՀՀԱԱ-ն Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան լիցենզավորված աուդիտորական ընկերություններին տեղեկացնում է ԱՌՄ-ի սկզբունքների ու պայմանների վերաբերյալ:
2. ԱՌՄ-ն՝ աուդիտորական ընկերությունների որակի վերահսկողության համակարգի ընթացիկ քննարկումը և գնահատումն է, ներառյալ իրականացված առաջադրանքներից ընտրված առաջադրանքների ստուգումներ, որոնք նախատեսված են ողջամիտ երաշխիք ապահովելու, որ որակի վերահսկողության համակարգը պատշաճ գործում է: ԱՌՄ-ն իրականացվում է հարցաշարի և գնահատման համակարգի միջոցով, որոնք հաստատվում են ՀՀԱԱ Խորհրդի կողմից (Հարցաշարի և գնահատման համակարգի կազման և կիրառման

հիմնական սկզբունքները տես Հավելված 2-ում): Հարցաշարը և գնահատման համակարգը մշակվում են՝ հիմնվելով Որակի վերահսկողության միջազգային ստանդարտ (ՈՎՄՍ) 1-ի վրա (Ֆինանսական հաշվետվությունների աուդիտ ու դիտարկման աշխատանքներ, ինչպես նաև հավաստիացման ու հարակից ծառայությունների այլ առաջադրանքներ իրականացնող ընկերությունների որակի վերահսկողություն):

3. Հարցաշարը և գնահատման համակարգը նախապես տրամադրվում են ԱՌՄ-ին մասնակցող աուդիտորական ընկերություններին: ԱՌՄ-ն որպես կանոն իրականացվում է տվյալ տարվա երկրորդ կիսամյակում:
4. ԱՌՄ-ն աուդիտորական ընկերություններում իրականացվում է ՀՀԱԱ-ի կողմից ընտրված Ստուգման խմբի՝ Աուդիտորի և նրա օգնականի կողմից: Աուդիտորի ընտրության պարտադիր պահանջներն են.
 - a. միջազգային աուդիտորական ընկերությունների ցանցի (առաջին տասնյակում) վերջին տաս տարում երեք տարվա աշխատանքային փորձառություն՝ աուդիտի մենեջեր կամ ավելի բարձր պաշտոնում (ցանկալի է արտերկրում);
 - b. Տվյալ տարվա ընթացքում Հայաստանում գործող որևէ աուդիտորական ընկերության աշխատակից կամ բաժնեմասի/բաժնետոմսի սեփականատեր հանդիսացած չլինելը:
5. Աուդիտորական ընկերություններին տրամադրվում են ՀՀԱԱ կողմից իրենց մոտ իրականացված ԱՌՄ-ի արդյունքները (հաշվետվությունը) և գնահատումը (եզրակացությունը), անկախ այդ գնահատման դրական կամ ոչ դրական լինելուց:
6. ՀՀԱԱ-ն հրապարակում է ԱՌՄ-ի դրական գնահատում ստացած աուդիտորական ընկերությունների անվանումները, նրանց տրամադրելով նաև համապատասխան վկայական: Դրական գնահատում ստացած ԱՌՄ-ի մասնակիցների ցանկը հրապարակվում է www.aaaa.am կայքում և տրամադրվում է շահագրգիռ հաստատություններին:
7. ՀՀԱԱ-ն գաղտնի է պահում.
 - a. ԱՌՄ-ի մասնակից, սակայն ԱՌՄ-ի արդյունքում դրական գնահատում չստացած աուդիտորական ընկերությունների անվանումները;
 - b. ԱՌՄ-ի մասնակիցներին տրամադրված հաշվետվությունը:

5 ԱՌՄ-ի կառավարումը

1. ԱՌՄ-ի կառավարման նպատակով ՀՀԱԱ խորհուրդը ստեղծում է ԱՌՄ-ի պատասխանատու խումբ (ԱՌՄ ՊԽ): ԱՌՄ ՊԽ ղեկավարումն իրականացվում է ՀՀԱԱ

նախագահի կողմից: ԱՌՄ ՊԽ-ում նաև ընդգրկվում են ՀՀԱԱ Խորհրդի շրջանակներում Ջարգացման ծրագրի Նպատակ 1-ի՝ Աուդիտորական գործունեության որակի հսկողության համար պատասխանատու՝ ՀՀԱԱ նախագահի տեղակալը և ՀՀԱԱ գործադիր տնօրենը:

2. ԱՌՄ ՊԽ գործառույթներն են.

- a. Սույն Ընթացակարգով հաստատված Սկզբունքների հիման վրա աուդիտորական ընկերությունների հետ հարաբերությունների համակարգումը և ԱՌՄ-ի գծով քաղաքականությունների վերաբերյալ առաջարկությունների ձևավորումը;
- b. Կետ 4.3-ում նշված Հարցաշարի և Գնահատման համակարգի մշակման կազմակերպումը;
- c. Կետ 4.4.-ում նշված՝ Ստուգման խմբի ընտրությունը՝ ուսումնասիրելով նրանց բարի համբավը և Հայաստանի Հանրապետության “Աուդիտորական գործունեության մասին” օրենքով սահմանված՝ աուդիտորի որակավորման սահմանափակումներին համապատասխանությունը;
- d. Ստուգման խմբի աշխատանքի նկատմամբ մոնիթորինգը՝ առանց մասնագիտական միջամտության և անկախության խախտման;
- e. Գանգատարկման դեպքերում քննարկումների կազմակերպումը, որոնց գծով վերջնական որոշումը կայացվում է Աուդիտորի կողմից:

3. ԱՌՄ ՊԽ կազմակերպում է իր նիստերի արձանագրումը, որի փաստաթղթավորումն իրականացվում է ՀՀԱԱ աշխատակազմի կողմից:

6 ԱՌՄ-ին միանալու Համաձայնագիրը

Կետ 4.1-ում նշված ԱՌՄ-ին միանալու Համաձայնագրի ձևը հաստատվում է ՀՀԱԱ խորհրդի կողմից՝ ԱՌՄ ՊԽ ներկայացմամբ:

ՀՀԱԱ անունից ԱՌՄ-ի մասնակից ընկերությունների հետ Համաձայնագրի ստորագրումն իրականացվում է ՀՀԱԱ-ի դուստր կազմակերպության, այն է “ԱԱԱԱ” ՀՈԻՀԿ ՍՊԸ կողմից:

7 ԱՌՄ-ին մասնակցության վճարի չափի որոշումը

ԱՌՄ-ի մասնակցության վևարի չափը ամեն տարի (ամեն փուլի համար) որոշվում է ՀՀԱԱ խորհրդի կողմից:

Հարցաշարի, գնահատման համակարգի և ստուգման ընտրված ֆայլերին առնչվող հիմնական սկզբունքները

1. ԱՌՄ հարցաշարը բաղկացած է երեք հիմնական բաժիններից.
 - Որակի նախագծում,
 - Որակի նախագծված համակարգի կիրառում,
 - Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ֆայլի վերանայում:
2. Հաշվի առնելով ԱՌՄ աստիճանական զարգացումը, 2012թ.-ի ստուգվող աուդիտի ֆայլերը հիմնականում ուղղված են խոշոր ձեռնարկությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտի որակի հսկողությանը՝ բացառելով.
 - Խմբերի աուդիտը,
 - Ֆինանսական ոլորտի կազմակերպությունների աուդիտը,
 - Հատուկ նպատակով պատրաստված ֆինանսական հաշվետվություններին աուդիտը:2013թ. և հետագա ակնկալվող ԱՌՄ-ները կարող են ընդրկել նաև նշված աուդիտի ֆայլերը:
3. Կախված աուդիտորական ընկերության փայտատերերի և/կամ մենեջերների քանակից, Աուդիտորի կողմից ընտրվում է երկուսից-հինգ առաջադրանքի ֆայլ:
4. Մինչև ԱՌՄ-ի Ստուգող խմբի անդամներին աուդիտորական ֆայլերի տրամադրումը Աուդիտորական ընկերությունը իրավունք ունի նախապես ձեռնարկել անհրաժեշտ քայլեր իրենց հաճախորդի նկատմամբ ստանձնած գաղտապահության դրույքների պահպանման ապահովման համար, որը կարող է ներառել՝ ստանալ այն աուդիտի ենթարկված անձանց գրավոր համաձայնությունը, որոնց վերաբերվում են ստուգման ենթակա ֆայլերը:
5. Գնահատման համակարգը հիմնված է հարցերի գծով առավելագույն թերության/բացթողման Աուդիտորի գնահատման՝ ելնելով իր գիտելիքներից և փորձառությունից:
6. Յուրաքանչյուր բաժին կամ ֆայլի վերանայում դիտարկվում է առանձին: Տվյալ բաժինը/ֆայլը համարվում է դրական գնահատված, եթե տվյալ բաժնի/ֆայլի բացթողումների/թերությունների ընդհանուր զումարը չի գերազանցում ընդհանուր առավելագույն բացթողման սահմանված տոկոսը՝ առանց հաշվի առնելու ոչ տեղին հարցերին տրված բացթողման առավելագույն միավորները:
7. ԱՌՄ 2012թ. փուլի համար սահմանվում է առավելագույն հանրագումարային սխալի 30% ցուցանիշը, որը յուրաքանչյուր հաջորդ տարի կիսստացվի (կնվազեցվի):
8. Ֆայլի վերանայման բաժնում առանձնացված են հարցեր, որոնց թեկուզ մեկ թերացումը հանգեցնում է տվյալ ֆայլով ոչ դրական գնահատման, մասնավորապես՝ անկախության սկզբունքի խախտումը:
9. Աուդիտորական ընկերությունը ԱՌՄ-ի համակարգով համարվում է դրական գնահատում ստացած, եթե նա դրական գնահատում է ստացել բոլոր յուրաքանչյուր բաժնով և ֆայլով: Այսինքն, մեկ բաժնում կամ ֆայլում ոչ դրական գնահատականի դեպքում ընդհանուր գնահատումը կլինի ոչ դրական: